ՍՊԱՐՏԱԿ ԱՊԵՏՆԱԿԻ ԹԵՎՈՍՅԱՆ

Ծնվել է 1949թ. Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանում: 1964թ. Ավարտել է Խնուշինակի ութամյա դպրոցը, 1967թ.՝ Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումը, իսկ 1976թ.՝ Երևանի պետական համալսարանի «Ֆինանսներ և վարկեր» ֆակուլտետը:

1970-79թթ. Աշխատել է մարզային ֆինանսական բաժնում: 1979-86թթ. Զբաղեցրել է Լեռնային Ղարաբաղի ագրոարդյունաբերական համալիրի գլխավոր տնօրենի տեղակալի, իսկ 1986-87թթ.՝ ԼՂԻՄ Ագրոարդի նախագահի առաջին տեղակալի պաշտոնները:1987-89թթ. Վարել է Ագրոբանկի կառավարչի, իսկ 1989-91թթ. ԼՂ մարզային գործկոմի ֆինանսական բաժնի վարիչի պաշտոնները:

1992-95թթ. Աշխատել է ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի պաշտոնում:

1995-98թթ. Պաշտոնավարել է որպես ԼՂՀ առաջին փոխվարչապետ և էկոնոմիկայի ու ֆինանսների նախարար:

1998-99թթ. Զբաղեցրել է Ագրոբանկի կառավարչի պաշտոնը:

1999թ. Հուլիսին կրկին նշանակվել է ֆինանսների նախարար:

2002թ. ԼՂՀ Նախագահի հրամանագրով նշանակվել է ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար:

ԼՂՀ Նախագահի 2007թ. Սեպտեմբերի 25-ի հրամանագրով նշանակվել է ԼՂՀ ֆինանսների նախարար:

ԼՂՀ Նախագահի 2009թ. Հունվարի 19-ի հրամանագրով նշանակվել է ԼՂՀ փոխվարչապետ:

ԼՂՀ նախագահի 2012թ. սեպտեմբերի 22-ի հրամանագրով նշանակվել է ԼՂՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար:

Ամուսնացած է, ունի երեք զավակ:

ՐԱՖՖԻ ԲԱԼՅՈԶՅԱՆ

Ծնվել է 1983 թվականին։

2002-2004 թվականներին սովորել է Ֆրանսիայում, IUT, Բիզնես Մենեջմենթի Ինստիտուտում ստացել 2 տարվա համալսարանական աստիճան մենեջմենթի ոլորտում

2005 թվականին փոխանակման ծրագրով սովորել է Կանադայում, CONCORDIA համալսարանում, ուսումնասիրել կորպորատիվ ֆինանսներ, միջազգային բիզնես իրավունք, մարքեթինգ։

2004-2007 թվականներին ստացել է ֆինանսական շուկաների ոլորտում մագիստրոսի աստիճան Ֆրանսիայի CERAM Business School համալսարանում։

2008թ. Հունվար-հուլիսին աշխատել է որպես սեփական կապիտալի հետազոտության, քիմիական և արդյունաբերական գազի վերլուծաբան NATIXIS- Արժեթղթեր, Փարիզում։

2008-2010 թվականները աշխատել է NATIXIS-կապիտալ շուկաներ, Նյու Յորքում որպես վարկային համախմբման և վարկային վաճառքի առևտրի վերլուծաբան։

ՀԱՅԿ ԲԱՐՍԵՂԻ ԲԵԳԼԱՐՅԱՆ

Ծնվել է 1980 թվականին, Հայաստանի Հանրապետությունում, ք. Երևանում։

1997 թվականին ավարտել է Խ. Աբովյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցը։

2002 թվականին ավարտել է Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտը։

2002-04թթ. Ծառայել է ՀՀ զինված ուժերում։

Աշխատել է «Ֆլեշ» ՍՊԸ-ում, «Արարատբանկ» ՓԲԸ-ում։

2008 թվականից աշխատում է ՀՀ Վերահսկիչ պալատում, որպես առաջատար մասնագետ։

ՀԱՅԿ ԲՈՅԱՋՅԱՆ

Ծնված 06.06.1979թ.,

հասցե ՀՀ. ք. Երևան, Շոպրոնի 2-29

1996-2000թթ Երևանի պետական համալսարան /տնտեսագիտության ֆակուլտետ, բակալավր/,

2002-2004թթ Երևանի պետական համալսարան /տնտեսագիտության ֆակուլտետ, մագիստրոս/,

2000-2002թթ. պարտադիր զինվորական ծառայություն,

2005թ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա, ռեեստրի վարման բաժին, մասնագետ,

2005-2006թթ. «ՎՏԲ բանկ Հայաստան», տնտեսագետ,

2006թ. առ այսօր «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ, մասնագետ, պորտֆելի կառավարիչ, ավագ պորտֆելի կառավարիչ:

Արժեթղթերի միջազգային և տեղական շուկաներում ունի երկար տարիների փորձ:

Ամուսնացած է, ունի մեկ որդի:

ԱՐԱ ՌՈՄԵՆԻ ՂՈՆՅԱՆ

Ծնվել է 1977թ. Հայստանի Հանրապետությունում, ք. Կապանում:

1994թ. ավարտել է Կապանի թիվ 7 միջնակարգ դպրոցը

1994 – 1999թթ. Սովորել և ավարտել է

«ՄՅՈՒԴ» Իրավաբանական Ինստիտուտ, ք. Երևան, ՀՀ

Իրավաբանական Ֆակուլտետ

Իրավագիտության մագիստրոս

2000 - 2004. Սովորել և ավարտել է ՀՀ Պետական Կառավարման Ակադեմիա, ք. Երևան, ՀՀ

«Պետական Կառավարում և Տեղական Ինքնակառավարում»ֆակուլտետ, *Պետական ծառայողի որակավորում*

1999 – 2002 աշխատել է «Պետական ապահովագրություն – Հայաստան» ՓԲԸ, ք. Երևան, ՀՀ, որպես *Իրավախորհրդատու*

2003-2004թթ. «Կապանի Համայնքների Միություն» ՀԿ, ք. Կապան, ՀՀ, որպես *Իրավախորհրդատու*

ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության հասարակական կապերի դեպարտամենտի «Համայքների իրազեկում Մարդու իրավունքների և Պաշտպանի մասին», USAID/ World Learning NSP «Ընտրությունների իրազեկում և ակտիվ մասնակցություն» ծրագրերի *Իրավախորհրդատու-փորձագետ*

2003 – 2004 «Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ, ք. Կապան, ՀՀ, որպես *Իրավաբանական բաժնի պետ*

2005 – 2007 «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ ք. Կապան, ՀՀ *Իրավաբանական բաժնի պետ, Իրավաբանական և մարդկային ռեսուրսների բաժինների համակարգող*

2007–2008 «ԹՈՒՆԵԼ» ՓԲԸ, ք. Կապան, ՀՀ, որպես *Իրավախորհրդատու*

2007-2010 «ՌԷՖՄԵՆ» ՍՊԸ /իրավախորհրդատվական ընկերություն/, ք. Կապան, ՀՀ, որպես *Տնօրեն*

2008-ից մինչ այսօր «Զանգեզուրի Պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ, ք.Քաջարան, ՀՀ,

Իրավաբանական Պայմանագրային Ծառայության պետ:

Ամուսնացած է ունի մեկ որդի:

ԿԱՐԵՆ ԱՐԱԲՅԱՆ

Ծնվել է 1977 թվականին։

1994-1995 թվականներին սովորել է Սանկտ-Պետերբուրգի Տեխնիկական Համալսարանում, Էներգետիկայի բաժնում, ապա տեղափոխվել Երևանի Պետական Ճարտարագիտական Համալսարանը։

1995-1998 թվականները ավարտել է Երևանի Պետական Ճարտարագիտական

համալսարանը, ստացել բակալավրի աստիճան։

2004-2006 թվականները աշխատել է Դանիայի Բնապահպանական գործակալության հետ ծրագրի խորհրդատու Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի համար։

2006-07
թվականները աշխատել է որպես ծրագրի խորհրդատու “Էներգախնայողության Ալյանս” կազմակերպությունում որպես փորձագետ։

2008-2012 թթ աշխատել է Եվրամիության TACIS ծրագրերում որպես էներգետիկայի հարցերով փորձագետ։

2010-2012 թթ աշխատել է Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի որպես վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետության քաղաքականության փորձագետ։

2008-2013թթ որպես խորհրդատու աշխատել է էներգետիկայի ոլորտում մի շարք միջազգային կազմակերպությունների հետ, մասնավորապես՝ Համաշխարհային Բանկ, Ասիական Զարգացման բանկ, Եվրոպական Վերակառուցման և Զարգացման Բանկ և այլն։

ՎԱՀՐԱՄ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԲԵԳԼԱՐՅԱՆ

Ծնվել է 1976թ., Լեռնային Ղարաբաղի հանրապետությունում:

1993թ. ավարտել է Ստեփանակերտի թիվ 8 միջնակարգ դպրոցը:

1993-98թթ. սովորել է Արցախի պետական համալսարանում, «ֆինանսներ և վարկ» մասնագիտությամբ:

1993-94թթ. ծառայել է ԼՂՀ Պաշտպանության բանակում:

1996թ. ընդունվել է աշխատանքի ԼՂՀ Զինվորական դատախազությունում:

1997թ. աշխատանքի է ընդունվել «Ագրոբանկի» մասնաճյուղում, որպես տնտեսագետ: 1998թ «Ագրոբանկի»-ում նշանակվել է գլխավոր տնտեսագետի, այնուհետև՝ 1999թ. Փոխկառավարչի պաշտոններում:

2004-05թթ. աշխատել է «Ղարաբաղ Գոլդ» ՓԲԸ-ում:

2008թ. նշանակվել է «Տեխնոշին» ՍՊԸ տնօրեն:

2009 թվականից առայսօր աշխատում է «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ գլխավոր տնօրենի պաշտոնում: